# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2021թվականի N 85-Ա

### <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ>>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի19-ի N596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>>փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված նախագծային փաստաթղթերը և դիմումը՝որոշում եմ.

1. Համաձայնեցնել կառուցապատող՝<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>>փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած <<Վոլիոս նախագծային ինստիտուտ>>փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Գեղադիր համայնքի 11-րդ փողոցի 6-րդ հասցեում Վարդան Օնանյանին պատկանող տարածքի 0.4 ԿՎ, էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:
2.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարությունը սկսելուց 3 օր առաջ ներկայացնել տեղեկանք շինարարությունն սկսելու մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021թ.նոյեմբերի 29
գ.Գեղադիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԳԵՂԱԴԻՐ

(ՀՀ մարզ, համայնք)

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 06

29 նոյեմբերի 2021 թ.

Տրված է կառուցապատող <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ>>ՓԲԸ -ին՝

ՀՀ Կոտայքի մարզ,Գեղադիր գյուղ 11-րդ փողոց թիվ 6 հասցե

Նախագիծ, միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտ/2-րդ կատեգորիա/10կՎ ՄԳ-ի,10Կվ ՕԳՊ-ի 0.4 ԿՎ ՕԳՄ-ի ,ԿՏԵ-ի տեղադրման և 0,4 ԿՎ ՕԴՄ-երի ուղեգծերի անցկացում օբյեկտի

Գեղադիր գյուղի 11-րդ փողոցի թիվ 6 հասցեում Վարդան Օնանյանին պատկանող տարածքում նոր տեղադրվող 0,4 ԿՎ էլեկտրամատակարարման ՝ուղեգծերի անցկացմաբ աշխատանքների կատարման շինարարության թույլտվության համար արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են ________________________

<<ՎՈԼԻՈՍ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>>ՓԲԸ – ի կողմից:

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 29 նոյեմբեր 2021 – 29 հոկտեմբեր 2022թ.ընթացքում:

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2021թվականի N 86-Ա

### ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի 19-ի 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ և 124-րդ կետերով և հաշվի առնելով քաղաքացի Վարդան Օնանյանի դիմումը 'որոշում եմ.

1.Թույլատրել Վարդան Օնանյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Գեղադիր համայնքի 11-րդ փողոցի 6-րդ հասցեի տնամերձ հողամասում 2020թվականի հուլիսի 29-ի N02 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան,օժանդակ շինությունների և քարե պարսպի կառուցման շինարարական աշխատանքները համաձայն փոփոխված նախագծի :
2.Թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի հուլիսի 29-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Օնանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2021 թ. դեկտեմբերի 3
գ.Գեղադիր

ՁԵ N 2-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔ
(ՀՀ մարզ, համայնք)

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 02 « 29» հուլիսի2020 թ.

Փոփոխված՝ Գեղադիր համայնքի ղեկավարի 2021թվականի դեկտեմբերի 3-ի N86-Ա որոշմամբ:

Տրված է կառուցապատող Վարդան Օնանյան,Երևան,Մինոյան 3 բն 33
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն,
Կոտայքի մարզ Գեղադիր,11-րդ փողոց 6
հողամասի գտնվելու վայրը)

միջինից բարձր ռիսկայնության III կատեգորիա
______ օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

Բնակելի տուն,օժանդակ շինություններ,քարե պարիսպի շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում`
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների
______ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են << ԱՐԽԻ-ՏՈՒՐ>> ՍՊԸ –ի
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների
ՃԲԴ-Ա-0122
______ կողմից.
կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել են՝ «27» հուլիս 2020 թ. N V-160/20 փորձագիտական դրական եզրակացությունը
(եզրակացությունները) պարզ փորձաքննություն
(նշել փորձաքննության տեսակը)
<<Ա.Ռ.Մ.ՇԻՆ>> ՍՊԸ-ի
______ կողմից .
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ՝

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ (նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների Գեղադիր համայնքի ղեկավարի
______
հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

-Շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2023թվականի հուլիսի 29-ը

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 36 ամսվա ընթացքում
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)
ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 18 էջից, կարված և դրոշմակնքված է Գեղադիրի համայնքապետարանի ______ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են *(լրացվում է N 1 հավելվածի 110-րդ կետով նախատեսված դեպքերում)* ______ կողմից
(նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ______ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ______ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 125-128-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի* 86-րդ կետով *սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը ______:
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ______ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ______ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) ______ տրված սույն թույլտվությունը
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)
նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ______:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ
(ստորագրությունը)

Կ. Տ.